ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 29 >> հոկտեմբեր 2011թ. N 56

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի ''ժդ'' ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունիսի 30-ի N 891-Ա որոշման 3-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի հուլիսի 26-ի N 01/14.23/2429-11 գրությունը՝ <<Բաղրամյանի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում>> պետական փակ բաժնետիրական ընկերությունում գույքագրում իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Բաղրամյանի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին/համաձայնությամբ/:
3. Հանձնաժողովին /Մ. Սարիբեկյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրվա ընթացքում, գույքն ու համապատասխան փաստաթղթերը հանձնել լուծարման հանձնաժողովին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2011 թվականի հուլիսի << 29 >>-ի
N 56 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Սարիբեկյան *-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ*

Անդամներ՝

Հ. Իսկանդարյան *-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ*

Ա. Պողոսյան *-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար:*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ